# ՀԱՆԴԷՍ

## ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՆՈՒԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընծայուի Սրբազան Պատրիարքի առաքելոյն Սրբոյ Երուսաղէմի ։

Ամսոյս 11 ին, Նոյեմբեր Մարգարէի տօնախմբութեան օրը, կատարեցաւ Առաքելական Աթոռոյս Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի անուանակոչութեան տարեդարձի հանդէսը։ Առաւօտեան փայլուն ժամերգութենէն զկնի՝ մատուցաւ հանդիսաւոր պատարագ ի ձեռն Աւագ Լուսարար Կարապետ Սրբազան Արքեպիսկոպոսի և յետ աւարտման սուրբ պատարագին բոլոր միաբանական ուխտը, սուրբ Աթոռոյս ժառանգաւոր աշակերտները և այլ քաղաքացի այցելուներ դիմեցին ի պատրիարքարան ի շնորհաւորութիւն տարեդարձի Ամե. Սրբազան Պատրիարքին։ Երգուեցան պատշաճաւոր երգեր, կարդացուեցան երկու ճառեր և մատուցան Ամե. Պատրիարք Հօրը քանի մի հայերէն և մի Հատ գաղղիերէն ճառեր, զորս յօրինած էին Ժառանգաւորաց Վարժարանի առաջնակարգ աշակերտները, յայտնելով իրենց երախտագիտական զգացմունքները իրենց մեծախնամ Բարերարին և բոլոր միաբանական ուխտին։ Սրբազան Պատրիարքը գեղեցիկ ատենախօսութեամբ քաջալերեց միաբանները և ժառանգաւորները և օրհնելով բոլոր հանդիսականները և ընդհանուր Հայոց Ազգը՝ արձակեց այցելուները։ Իսկ երեկոյեան մասնաւոր պատրաստութեամբ փայլուն հացկերոյթ եղաւ միաբանական ընդհանուր սեղանի վրայ, ուր հրաւիրուած էին նոյնպէս քանի մի քաղաքացի պատուաւոր անձինք։ Այս հացկերոյթը, որ Սրբազան Պատրիարքի տարեդարձին կը կատարուի, որոշուած է յատկապէս այն դիտաւորութեամբ, որ առանձինն իւրաքանչիւր միաբան իր անուանակոչութեան տօնի համար մասնաւոր ծախք չունենայ, այլ միայն վերոյիշեալ հանդիսաւոր հացկերոյթը տարին մի անգամ՝ պատրաստուի ի կողմանէ համայն միաբանից ի պատիւ ամենեցուն։ Ամե. Սրբազան Պատրիարքի անուանակոչութեան տարեդարձի առթիւ գրուած ճառերէն գէթ երկուքը առ այժմ կը զետեղենք Օրագրիս մէջ ի խրախոյս յօրինողաց և ի ծանօթութիւն ընթերցողաց, խոստանալով յարմար առթիւ միւսներն ևս հրատարակել։

---

## ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՅԱՒՈՒՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԵՍԱՅԻ ԱԶԳԱՍԷՐ Ս. ՀՕՐ

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Մեր զգայմանց վրայ աւուրս ուրախական ազդեցութեանց ներգործութիւնն՝ այսօր ուրիշ աստիճանի առած է մեզ համար. ի՞նչ աստիճան ուրախացեր ենք և ի՞նչ աստիճանի բերկրական, որ զմեզ անսովոր կերպիւ ցնծութեամբ համակելով կը ծովէ համագումար հասարակութիւնս մեծ ու փոքր իւրաքանչիւր անդամները ՝ի միասին խնդակցելու. զգացմանս այս աւուր տպաւորութիւնը ներկայացնելոյս վրայ, այս տեղ ՝ի վեր հանելու գրչիս ապիկարութիւնը թէ և մեզ խոստովանելի և ձեզ ամենեցուն հաւատալի է անշուշտ, սակայն սրտի մի երախտագիտութիւնը անհրաժեշտ պարտք ցուցանելով կ'ստիպէ անկարողը թէև ոչ լռելն, գէթ ըստ իւրայինն այն զգացմանց ոսկէ ծաղիկը, և սկզբնա-